Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2023 թվականի մարտի 15-ի
N 57- Ա որոշման

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՊԵՐԱՏՈՐԻ՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿԻ

1. Համայնքային օպերատորի կողմից սպասարկվող ներհամայնքային կանոնավոր երթուղիներում փոխադրավարձի ձևավորման համար պետք է հիմք հանդիսանա Գյումրու համայնքի ղեկավարի կողմից հաստատված Գյումրու ներհամայնքային երթուղիների չվացուցակներով նախատեսված կանոնավոր ուղևորափոխադրումների ամբողջությամբ իրականացման համար անհրաժեշտ օպերատորի կողմից կատարվող ծախսերի և նախատեսվող եկամտի (կարող է չնախատեսվել) հանրագումարը:

2. Ծախսային բաղադրիչը պետք է ներառի՝

1) վառելիքի ծախսի հաշվարկը"

2) շարժիչային յուղի և քսայուղերի ծախսի հաշվարկը.

3) անվադողերի և մարտկոցների ծախսի հաշվարկը"

4) տեխնիկական սպասարկումների և նորոգումների ծախսի հաշվարկը"

5) ամորտիզացոն մասհանումների հաշվարկը"

6) վերադիր ծախսերի հաշվարկը"

7) վարորդների աշխատավարձի մասով հաշվարկը"

8) հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկը:

3. Ծախսային մասի բոլոր 8 բաղադրիչների հանրագումարը արտացոլում է փոխադրման ինքնարժեքը: Փոխադրավարձը ձևավորվում է ինքնարժեքի և եկամտի գումարի հարաբերակցությունը կանխատեսվող ուղևորների թվին:

5. Շարժիչային յուղի և քսայուղերի ծախսի հաշվարկ

Շարժիչային յուղի հաշվարկի համար հիմք հանդիսացող բաղադրիչները	Ցուցանիշը
Փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային (արտադրողի կողմից տրամադրված) ցուցանիշը (լիտր)	
Մեկ լիտր շարժիչային յուղի գինը (դրամ)	
Մեկ տրանսպորտային միջոցի մեկ ամսվա շարժիչային յուղի ծախսը (դրամ) (=փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային ցուցանիշը × մեկ լիտր յուղի գինը)	
Երթուղում մեկ ամսվա շարժիչային յուղի ծախսը (դրամ) (= երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների մեկ ամսվա շարժիչային յուղի ծախսը)	
Քսայուղերի հաշվարկի համար հիմք հանդիսացող բաղադրիչները	**Ցուցանիշը**
Փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային (արտադրողի կողմից տրամադրված) ցուցանիշը (կգ)	
Մեկ կիլոգրամ քսայուղի գինը (դրամ)	
Մեկ տրանսպորտային միջոցի մեկ ամսվա քսայուղերի ծախսը (դրամ) (=փոխարինման և ավելացման ամսական նորմատիվային ցուցանիշը × մեկ կգ յուղի գինը)	
երթուղում մեկ ամսվա քսայուղերի ծախսը (դրամ) (=երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների մեկ ամսվա քսայուղերի ծախսը)	
Ընդամենը՝ երթուղում մեկ ամսվա շարժիչային յուղի և քսայուղերի ծախսը (դրամ) (=**երթուղում մեկ ամսվա շարժիչային յուղի ծախսը + երթուղում մեկ ամսվա քսայուղերի ծախսը**)	

Տեխնիկական սպասարկումներ և նորոգումներ	Ցուցանիշը
Տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման համար կատարվող տարեկան ծախսը:	
Տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման համար կատարվող ամսական ծախսը (դրամ) (=տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման համար կատարվող տարեկան ծախսը /12)	
Երթուղում տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման համար կատարվող ամսական ծախսը (դրամ) (=երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների մեկ ամսվա տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման համար կատարվող ծախսերը)	

8. Ամորտիզացոն մասհանումների հաշվարկը

Ամորտիզացոն մասհանումներ	Ցուցանիշը
Տրանսպորտային միջոցի մակնիշը	
Ամորտիզացիոն ժամկետը (տարի)[1]	
Տրանսպորտային միջոցի գինը (դրամ)	
Մեկ տրանսպորտային միջոցի մեկ ամսվա ամորտիզացիոն մասհանումները (դրամ) (=Տրանսպորտային միջոցի գինը/ (Ամորտիզացիոն ժամկետը ×12 ամիս)),	
Երթուղում մեկ ամսվա ամորտիզացիոն մասհանումները (դրամ) (=երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների մեկ ամսվա ամորտիզացիոն մասհանումների ծախսը)	

1) Ամորտիզացոն մասհանումների ժամկետի սահմանման համար պետք է հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետը, համաձայն որի թողարկման տարեթվից հաշված՝ 10 տարին լրացած ավտոբուսները ենթակա են պարտադիր փոխարինման:

Տրանսպորտային միջոցի վարձակալության դեպքում ամորտիզացոն մասհանումներ չեն հաշվարկվում, դրա փոխարեն հաշվարկում ներառվում է վարձակալության վճարը:

9. Վերադիր ծախսերի հաշվարկը.

[2]Երթուղում շահագործվող միկրոավտոբուսների տեխնիկական զննության վճարը պետք է հաշվարկվի միկրոավտոբուսների թողարկմանը հաջորդող չորրորդ տարվանից սկսած՝ տարեկան մեկ անգամ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝

1) տրանսպորտային միջոցների առաջին տեխնիկական զննությունն իրականացվում է թողարկմանը հաջորդող չորրորդ տարում.

2) թողարկման տարեթվից հաշված՝ 4-ից ավելի, ներառյալ՝ 10 տարվա արտադրության թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլներ, տրոլեյբուսներ, ավտոբուսներ, վտանգավոր բեռներ փոխադրելու համար նախատեսված մասնագիտացված տրանսպորտային միջոցներ և դրանց կցորդներ (կիսակցորդներ)՝ տարին մեկ անգամ, 10-ից ավելի տարվա արտադրության դեպքում՝ 6 ամիսը մեկ անգամ:

Փոխադրավարձի ինքնարժեքը = վառելիքի ծախս + շարժիչային յուղի և քսայուղերի ծախս + անվադողերի և մարտկոցների ծախս + տեխնիկական սպասարկումների և նորոգումների ծախս + ամորտիզացոն մասհանումներ + վերադիր ծախսեր + վարորդների աշխատավարձ + հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

Փոխադրավարձը = (ինքնարժեք + եկամուտ) /փոխադրվող ուղևորների թվին: